ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Մանկավարժական խորհրդի նիստի

2026թ-ի փետրվարի 27-ին կայացել է մանկավարժական խորհրդի նիստ:
Նիստին բացակա էին մանկավարժական խորհրդի 4 (չորս) անդամ:

Օրակարգում՝

1. Մանկավարժական խորհրդի 2026 թվականի փետրվարի 27-ի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
2. Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով հունվար-փետրվար ամիսների համար նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվություն (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
4. Ներդպրոցական վերահսկողության արդյունքներ.
   - **4.1.** Տարրական դասարանների սովորողների ուսումնական առաջադիմության՝ բնութագրման միջոցով գնահատման գործընթացի վերլուծություն (զեկուցող՝ Ս. Գորգինյան)
   - **4.2.** Մատենավարության ստուգում՝ թեմատիկ պլանների համապատասխանություն, սովորողների հաճախումների մշտադիտարկում, բացակայությունների հաշվառման վերահսկում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
   - **4.3.** Նախագծային աշխատանքների մեկնարկի և իրականացման ընթացքի վերաբերյալ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
   - **4.4.** Ներդպրոցական վերահսկողության շրջանակում ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն, դասալսումներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
5. Խելամիտ հարմարեցումների ձեռքբերում՝ ըստ առաջնահերթության (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
6. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասին (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)
7. Այլ հարցեր

Լսեցին՝

1. **Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատման մասին հաղորդումը (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Տնօրենի ժ/Պ Ա. Գարեգինյանը ներկայացրեց մանկավարժական խորհրդի 2026 թվականի փետրվարի 27-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 7 հարցից:

Լսեցին՝

2. **Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկուցում (զեկուցող՝ Ա. Գարեգինյան):**

Ա. Գարեգինյանը զեկուցեց, որ 2025–2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանների ներբեռնման գործընթացում արձանագրված բացթողումները վերացվել են սահմանված ժամկետում: Առարկայական մասնախմբերի նիստերի արձանագրությունների առավել հստակ և միասնական կազմման նպատակով մշակվել է դրանց վարման հստակ ձևաչափ, որով էլ ներկայումս

առաջնորդվում են բոլոր մասնախմբերը: Բացի այդ, «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շրջանակում 2025–2026 ուսումնական տարվա ապրիլ–մայիս ամիսներին նախատեսվող միջոցառումների վերաբերյալ արդեն իրականացվել են առանձին նախնական քննարկումներ մասնախմբերի ղեկավարների հետ. նախանշվել են հիմնական ուղղությունները և ներգրավված անձինք:

Նշեց նաև, որ «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի շրջանակներում բնութագրման միջոցով սովորողների գնահատում իրականացնելու դժվարությունների և էսսեագրության իրականացման անհնարինության մասին ներկայացնելու և ԿԶՆԱԿ հիմնադրամից խորհրդատվություն և աջակցություն ստանալու նպատակով վերջինիս ուղարկվել է պաշտոնական գրություն, որի պատասխանը դեռ չի ստացվել:

Լսեցին՝

3. **2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով հունվար-փետրվար ամիսների համար նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվություն (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Տնօրենի Ժ/Պ Ա. Գարեգինյանը նշեց, որ հունվար ամսին նախատեսված էր իրականացնել տարրական դասարաններում սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման վերլուծություն մի շարք առարկաների շրջանակում: Միաժամանակ նախատեսված էր մայրենի և մաթեմատիկա առարկաների առաջադիմության գնահատման վերլուծությունը իրականացնել մարտ ամսին: Մասնախմբերի ղեկավարների հետ կայացած խորհրդակցության ընթացքում որոշում է կայացվել երկարաձգել հունվարին նախատեսված տվյալների հավաքագրման և վերլուծության ժամկետները՝ գործընթացում ներառելով նաև մարտ ամսվա համար նախատեսված առարկաները և իրականացնելու սովորողների ուսումնական առաջադիմության համապարփակ վերլուծություն բոլոր առարկաների շրջանակում՝ պատրաստելով համապատասխան ամփոփիչ զեկույց:

2025–2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար նախատեսված վեց նախագծերի պլանները կազմվել և հաստատվել են, իսկ դրանց իրականացման աշխատանքները մեկնարկել են հունվարի վերջից:

Հունվար և փետրվար ամիսներին կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի օրվան, Մայրենի լեզվի միջազգային օրվան, ինչպես նաև անցկացվել է Թումանյանական շաբաթ: Դասարաններում իրականացվել են թեմատիկ տարբեր միջոցառումներ և կրթադաստիարակչական այլ աշխատանքներ: Իրականացված միջոցառումների վերաբերյալ պատրաստվել են համապատասխան նյութեր, որոնք հրապարակվել են դպրոցի պաշտոնական կայքէջում:

Հունվարի վերջին նախատեսված էր տնօրենի տեղակալի հետ իրականացնել քննարկումներ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սովորողների ընթացիկ ուսումնական առաջադիմության և ՄՀ աջակցության թիմի անդամների աշխատանքների արդյունավետության վերաբերյալ: Քանի որ տնօրենի տեղակալը գտնվել է արձակուրդում, նշված քննարկումները նրա կողմից իրականացնել հնարավոր չի եղել: Այդուհանդերձ, տնօրենի հետ անցկացվել են ընդլայնված խորհրդակցություններ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել նշված հարցերին և անհրաժեշտության դեպքում տրվել են համապատասխան ուղղորդումներ:

Սահմանված ժամանակահատվածում մեկնարկել են նաև ԱՈՒՊ-ների քննարկումները. իրականացվում է երկամսյա աշխատանքների ամփոփման երրորդ շրջափուլը, և ժամանակացույցին համապատասխան հանդիպումները շարունակվում են:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոց է ընդունվել 3 սովորող, իսկ 1 սովորող տեղափոխվել է այլ դպրոց:

Լսեցին՝

4. **Ներդպրոցական վերահսկողություն.**

4.1. *Տարրական դասարանների սովորողների ուսումնական առաջադիմության՝ բնութագրման միջոցով գնահատման գործընթացի վերլուծություն և (զեկուցող՝ Ս. Գորգինյան)*

«Տարրական դասարանների, երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա» առարկայական մասնախմբի ղեկավար Ս. Գորգինյանը ներկայացրեց բնութագրող գնահատման գործող համակարգի կիրառման ընթացքում ի հայտ եկող դժվարությունների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնական առաջընթացի լիարժեք արձանագրման խնդիրների վերաբերյալ (զեկույցը կցվում է սույն արձանագրությանը՝ հավելված 2):

4.2. *Մատենավարության ստուգում՝ թեմատիկ պլանների համապատասխանություն, սովորողների հաճախումների մշտադիտարկում, բացակայությունների հաշվառման վերահսկում, (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)*

Հունվար ամիսներին իրականացվել է մատենավարության ստուգում: Ընդ որում էլեկտրանային մատյաններում վերանայված թեմատիկ պլանների պատշաճ ներբեռնման ուղղությամբ մշտադիտարկումներն իրականացվել են հունվարի սկզբին, որի արդյունքների մասին արդեն իսկ ներկայացվել է մանկավարժական խորհրդի հունվարի արտահերթ նիստի ժամանակ, իսկ սովորողների հաճախումների մշտադիտարկումն ու էլեկտրանային մատյաններում հաշվառման գործընթացի մշտադիտարկումներն իրականացվել են հունվարի վերջին: Անդրադառնալով վերջինին տնօրենի ժ/Պ Ա. Գարեգինյանը նշեց, որ արձանագրվել են դեպքեր, երբ սովորողի բացակայությունների վերաբերյալ համապատասխան նշում մատյանում արված չի եղել: Ինչը լուրջ բացթողում է համարվում և դա վերացնելու համար ուսուցիչներին տրվել էր եկօրյա ժամկետ, որի արդյունքում բոլոր լրացումներն արվել էին:

Ա. Գարեգինյանը խոսեց նաև երկարատև բացակայություն ունեցող սովորողների մասին՝ նշելով, որ այս պահին պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի խմբում են գտնվում 2 սովորող, այդ թվում՝ Էլինա Մոհամմադ Սահակյանը (4գ), ում համար արդեն ուղարկվել է գրություն խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ ի դեմս համայնքի ղեկավարի և Մարկ Մայիս Սուքիասյանը (3գ), ում համար պատրաստվել է համապատասխան գրություն, որն ուղարկելու է մարտի 2-ին:

4.3. *Նախագծային աշխատանքների մեկնարկի և իրականացման ընթացքի վերաբերյալ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)*

Տնօրենի ժ/Պ Ա. Գարեգինյանը տեղեկացրեց, որ մասնախմբերի ղեկավարները հունվար ամսին ցուցաբերել են հետևողականություն՝ մշտադիտարկելով նախագծային աշխատանքների կազմակերպման և իրականացման ընթացքը՝ ինչպես կազմակերպչական, այնպես էլ բովանդակային մասերով: Հաստատված ժամանակացույցի համապատասխան, 21.01.2026-ին մեկնարկել է «Ես և

շրջակա աշխարհը» առարկայի «Բույսեր» թեմայով նախագիծը, «Բնագիտություն» առարկայի «Կաթնասուններ» նախագիծը նախատեսվում է մեկնարկել 03.02.2026-ին, իսկ «Հայրենագիտություն» առարկայից «Բնության հուշարձաններ» թեմայով նախագիծը՝ 05.02.2026-ին: Մշտադիտարկման ընթացքում արդեն հավաքագրվել էին նախագծերի իրականացման համար անհրաժեշտ նյութերը և կատարվել աշխատանքների նախնական բաշխում:

4.4. *Ներդպրոցական վերահսկողության շրջանակում ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն, դասալսումներ (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)*

Փետրվար ամսին նախատեսված է եղել իրականացնել ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանն, որը հունվարի 26-ի տնօրենի հետ ընդլայնված խորհրդակցության ժամանակ, մասնախմբերի ղեկավարների և ԿԱԴԱՀ-ի հետ քննարկման արդյունքում, որոշվել է տեղափոխել մարտ ամիս, հնարավորություն տալով գործընթացին ներգրավել նաև տնօրենի տեղակալին: Այնուամենայնիվ անձնական խնդիրներով պայմանավորված տնօրենի տեղակալը սահմանված ժամկետում չի կարողանալու վերադառնալ արձակուրդից, այդ իսկ պատճառով աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով տնօրինության կողմից իրականացվող դասալսումների գործընթացին կմիանա նաև ԿԱԴԱՀ՝ Հ.Մինասյանը: Արդյունքում, մարտին ներդպրոցական վերահսկողության շրջանակում կիարկանացվեն դասալսումներ մասնախմբի ղեկավարների և տնօրինության կողմից, ընդ որում մասնախմբերի ղեկավարների կողմից մարտի առաջին շաբաթվա ընթացքում՝ սահմանված և մասնախմբերի նիստերում ներկայացված ժամանակացույցերին համապատասխան, իսկ մարտի 2-րդ և 3-րդ շաբաթվա ընթացքում տնօրենի և ԿԱԴԱՀ՝ Հ.Մինասյանի կողմից, որի հաստատված ժամանակացույցը կներկայացվի առաջիկա շաբաթվա ընթացքում: Նշեց, որ.

1) մասնախմբերի ղեկավարների կողմից դասալսումներն իրականացվելու են 2 ուղղությամբ՝
   - ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանն միտված դասալսումներ, որտեղ որպես նպատակ սահմանվել է «Առարկայի դրվածքի ուսումնասիրություն»,
   - սովորողների կրթության արդյունավետ իրականացմանն ուղղված դասալսումներ, որտեղ որպես նպատակ սահմանել «Դասի բովանդակության համապատասխանությունը ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին»:
2) տնօրինության կողմից դասալսումներն իրականացվելու են 1 ուղղությամբ՝
   - սովորողների կրթության արդյունավետ իրականացմանն ուղղված դասալսումներ, որտեղ որպես նպատակ սահմանել «Մաթեմատիկա առարկայի դասի բովանդակության համապատասխանությունը ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին»:

Լսեցին՝

5. **Խելամիտ հարմարեցումների ձեռքբերում՝ ըստ առաջնահերթության (զեկուցող՝ Ա. Գարեգինյան)**

Ա. Գարեգինյանը ներկայացրեց, որ առարկայական մասնախմբերում փետրվարի նիստերի ժամանակ քննարկվել է սովորողների արդյունավետ կրթության իրականացման համար հարմարեցված աշխատանքային գիրք – տետրերի (հավելված 1) և հաղորդակման սարքերի և տեխնոլոգիաների (հավելված 2) անհրաժեշտությունը, ներկայացվել են նախնական ցանկեր՝ խելամիտ հարմարեցումների շրջանակում, ըստ առաջնահերթության, դրանք ձեռք բերելու նպատակով:

Լսեցին՝

6. **Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասին (զեկուցող՝ Ա. Գարեգինյան**)

Ա. Գարեգինյանը խոսեց հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասին՝ ներկայացնելով, որ Բաղդասարյան Ռուզաննան և Տէրտերէան Անին արդեն 1 տարի է ինչ աշխատում են և ենթակա են պարտադիր ատեստավորման, իսկ Անդրեասյան Անահիտի, Պողոսյան Մարինեի, Խուբլարյան Բասիկի առնչությամբ նշեց, որ նրանց ատեստավորման ժամկետը լրանում է 2026 թվականի դեկտեմբեր ամսին:

Արտահայտվեցին

Անդրեասյան Անահիտը, Պողոսյան Մարինեն և Խուբլարյան Բասիկը նշեցին, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրենց ատեստավորման ժամկետը այս պահին դեռ չի լրանում, նրանք չեն ուզում ընդգրկվել ատեստավորվողների ցանկում:

Լսեցին՝

7. **Այլ հարցեր**

Ա. Գարեգինյանը տեղեկացրեց, որ «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շջանակներում իրականացվող «Բնական աղետներ» և «Անվտանգ ամառային արձակուրդներ» թեմաներով միջոցառումների մասով արդեն քննարկումներ եղել են մասնախմբերի նիստերում և նախանշվել են աշխատանքների հիմնական ուղղությունները: Առաջարկեց վերջնականացնել միջոցառումների իրականացման ժամկետների վերաբերյալ քննարկումները և մինչև մարտի 20-ը ներկայացնել միջոցառումների իրականացման հստակ ժամանակացույց:

Լսելով 2026 թվականի փետրվարի 27-ի մանկավարժական խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել մանկավարժական խորհրդի 27.02.2026 թվականի նիստի օրակարգը:
2. Մանկավարժական խորհրդի նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ զեկույցը համարել բավարար և կատարված աշխատանքը գնահատել լավ:
3. Տնօրենին և տնօրենի տեղակալին հանձնարարել լինել հետևողական «Այլընտրանքային հաղորդակցում» առարկայի շրջանակում բնութագրման միջոցով սովորողների գնահատման ընթացքում առկա դժվարությունների և էսսեագրության գործնական կիրառման խնդիրների շուրջ ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից ակնկալվող աջակցության ստացման հարցում:
4. 2025–2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ-ով հունվար–փետրվար ամիսների համար նախատեսված գործողությունների կատարումը գնահատել լավ:
5. Հունվար ամսին իրականացված մատենավարության ստուգման ընթացքում թեմատիկ պլանների առնչությամբ արձանագրված բացթողումները համարել վերացված: Սովորողների բացակայությունների հաշվառման մասով ուսուցիչներին հանձնարարել հետագայում ապահովել բացակայությունների վերաբերյալ տվյալների ժամանակին և ամբողջական

գրանցումը էլեկտրոնային մատյաններում՝ պահպանելով մատենավարության սահմանված կարգը:

6. Շարունակել վերահսկողությունը երկարատև բացակայություն ունեցող և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի խմբում գտնվող սովորողների հաճախումների նկատմամբ:
7. Հետևողական աշխատանք իրականացնել համապատասխան լիազոր մարմինների և ծնողների հետ՝ Էլինա Մոհամմադ Սահակյանի (4գ) և Մարկ Մայիս Սուքիասյանի (3գ ներգրավվածությունը ուսումնական գործընթացում ապահովելու և պարտադիր կրթությունից դուրս մնալու վտանգը կանխելու ուղղությամբ:
8. Շարունակել «Ես և շրջակա աշխարհը», «Բնագիտություն» և «Հայրենագիտություն» առարկաների շրջանակում նախատեսված նախագծային աշխատանքների իրականացումը՝ համաձայն հաստատված ժամանակացույցի՝ ապահովելով դրանց կազմակերպչական և բովանդակային մասերի շարունակական մշտադիտարկումը մասնախմբերի ղեկավարների կողմից:
9. Ընդունել ի գիտություն առարկայական մասնախմբերի ղեկավարների և տնօրինության կողմից սահմանված նպատակների և ժամանակացույցին համապատասխան դասալսումների իրականացումը:
10. Ընդունել ի գիտություն հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը և հաշվի առնել Անդրեասյան Անահիտի, Պողոսյան Մարինեի և Խուբլարյան Բասիկի ցանկությունը՝ չընդգրկվելու վերապատրաստվողների ցանկում մինչև իրենց ատեստավորման ժամկետի լրանալը, այն է 2026 թվականի դեկտեմբերը:
11. Շարունակել «Անվտանգ և ապահով կրթության տարի» խորագրի շրջանակում նախատեսվող միջոցառումների պլանավորումը և կազմակերպումը, իսկ առարկայական մասնախմբերի ղեկավարներին հանձնարարել մինչև 2026 թվականի մարտի 20-ը ներկայացնել միջոցառումների իրականացման հստակ ժամանակացույցը:
12. Հաստատել խելամիտ հարմարեցումների շրջանակում անհրաժեշտ ուսումնական նյութերի՝ հարմարեցված աշխատանքային գիրք-տետրերի, հաղորդակցման սարքերի և տեխնոլոգիաների ձեռքբերման վերաբերյալ ներկայացված նախնական ցանկերը համաձայն հավելված 1-ի, ըստ առաջնահերթության, կազմակերպել դրանց ձեռքբերման գործընթացը:
13. Ընդունել ի գիտություն տարրական դասարաններում բնութագրող գնահատման կիրառման ընթացքում արձանագրված խնդիրների վերաբերյալ ներկայացված զեկույցը և շարունակել դրանց լուծման հնարավոր ուղիների շուրջ քննարկումները:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ա. Գարեգինյան**

Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ **Ա. Անդրեասյան**

04.03.2026

Հավելված 1

Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների
հ. 17 հատուկ դպրոց ՊՈԱԿ-ի 2025-2026 ուսումնական տարվա
մանկավարժական խորհրդի թիվ 7 նիստի արձանագրության

ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ ՏԵՏՐԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Գիրք տետրի անվանում	Դասարան	Քանակ (հատ)
1.	Մաթեմատիկա 1	1-6-րդ	40
2.	Մաթեմատիկա 2	7-9-րդ	32
3.	Մայրենի նախաայբենական շրջան	1-4-րդ	11
4.	Մայրենի 1 Այբբենական շրջան	5-7-րդ	49
5.	Մայրենի 1 Ընթերցանության շրջան	8-9-րդ	16
6.	Ես և շրջակա 2	5-6-րդ	29
7.	Ես և շրջակա 3	7-9-րդ	32
8.	Իմ հայրենիքը 5	5-9-րդ	61
Ընդամենը			**270**

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Անուն, ազգանուն	Դասարան	Սարքի անվանում
1.	Արամ Հակոբյան	1ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
2.	Ադրիանա Քոչարյան	2ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
3.	Վահագն Գալստյան	2ա	Speech Generating Devices / ITALK 4 / STEP-BY-STEP
4.	Արեգ Ֆլջյան	3ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
5.	Արեգ Սարգսյան	2ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 12
6.	Սամվել Ղարիբյան	3բ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
7.	Միշել Ալոյան	4ա	Speech Generating Devices / ITALK 2 / STEP-BY-STEP
8.	Միքայել Նիկոյան	4բ	Speech Generating Devices / ITALK / STEP-BY-STEP Little կամ Little Mack
9.	Հովհաննես Մովսիսյան	7բ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 23
10.	Էրիկ Էյվազյան	8-րդ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 12
11.	Գառնիկ Հայրապետյան	8-րդ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 12

Հավելված 2

Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների
հ. 17 հատուկ դպրոց ՊՈԱԿ-ի 2025-2026 ուսումնական տարվա
մանկավարժական խորհրդի թիվ 7 նիստի արձանագրության

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ Հ. 17 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑՈՒՄ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

Գործող կարգավորումներով բնութագրող գնահատումն իրականացվում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում նախապես սահմանված ոլորտների և բնութագրիչների ընտրացանկից համապատասխան բնութագրիչի ընտրության միջոցով: Այս պահին համակարգում ներբեռնված են բնութագրիչներ 1-4 դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաների համար: Ընդ որում, յուրաքանչյուր առարկայի շրջանակում կան որոշակի ոլորտներ և դրանց համապատասխան նախատեսված են մի շարք բնութագրիչներ՝ դասակարգված հինգ մակարդակով (ա, բ, գ, դ, ե):

Թեև այս համակարգը նախատեսված է սովորողի առաջընթացը բազմակողմանի արտացոլելու համար, այնուամենայնիվ հաղորդակցման, ինտելեկտուալ (մտավոր) և զուգակցված այլ խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների դեպքում այն գործնականում ունի էական սահմանափակումներ:

1. ***Բնութագրիչների անհամապատասխանությունը սովորողների զարգացման իրական մակարդակին***

Մեր դպրոցի սովորողների զգալի մասի իրական կարողությունները և զարգացման դինամիկան համակարգում առկա բնութագրիչներով նկարագրել հնարավոր չի լինում: Շատ առարկաների պարագայում հնարավոր է լինում ընտրել առավելագույնը մեկ կամ երկու բնութագրիչ, այն էլ տվյալ առարկայի ոչ բոլոր ոլորտների համար: Կարևոր է ընդգծել, որ ընտրված բնութագրիչներն էլ շատ դեպքերում նշվել են ոչ այն պատճառով, որ սովորողը լիարժեքորեն տիրապետում է նշված կարողությանը, այլ որովհետև դա միակն բնութագրիչ է, որի համատեքստում գոնե կարող ենք ասել որ երեխան ինչ որ բան կարողանում է անել՝ մշտական կամ մասնակի աջակցությամբ:

Մի շարք առարկաների դեպքում ընդհանրապես հնարավոր չի լինում ընտրել որևէ բնութագրիչ, քանի որ ընտրացանկում ներառված բնութագրիչները չեն համապատասխանում սովորողի զարգացման ներկա փուլին (և հավանականությունը, որ ինչ որ ժամանակ կհամապատասխանի նվազագույնն է):

2. ***Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագրի բացակայություն կամ իրական պատկերի խեղաթյուրում***

Այն դեպքերում, երբ առարկաների սահմանված ոլորտների համար բնութագրիչներ չեն ընտրվում կամ ընտրվում են հնարավոր ամենանվազագույն կարողության նկարագիրը պարունակող տարբերակը, ստացվում է, որ սովորողի համար ձևավորում է ամփոփիչ ուսումնական բնութագիր, որը

չի համապատասխանում իրականությանը, չի արտացոլում սովորողի ուսումնառության և զարգացման ընթացքում արձանագրված առաջընթացը:

Սա հանգեցնում է նրան, որ.

- նույն սովորողի բնութագիրը կարող է կրկնվել տարբեր դասարաններում,
- չնայած սովորողի իրական առաջընթացին, փաստաթղթային մակարդակում դա որևէ կերպ չի արձանագրվում,
- ձևավորվում է սխալ տպավորություն, թե սովորողը ուսումնառության ընթացքում և զարգացման մեջ փոփոխություններ չեն եղել:

3. Առաջընթացի արդյունավետ արձանագրման բացակայության համակարգային ռիսկը

Կարևոր է ընդգծել, որ բնութագրերի կրկնվող կամ սահմանափակ լինելը չի նշանակում առաջընթացի բացակայություն: Մեր դպրոցում շատ դեպքերում առաջընթացն արտահայտվում է՝

- արձագանքման տևողության կրճատմամբ,
- ուշադրության կայունության աճով,
- աջակցությամբ կատարվող գործողությունների ծավալի ընդլայնմամբ,
- մասնակցության և մոտիվացիայի բարձրացմամբ:

Սակայն գործող բնութագրիչների շրջանակում այս փոփոխությունները չեն ունենում համապատասխան արտացոլման մեխանիզմ, ինչի հետևանքով գնահատումը հակասում է իր իսկ հայտարարած նպատակին՝ արձանագրել սովորողի անհատական ձեռքբերումներն ու զարգացման դինամիկան:

4. Օրենքի նպատակի և գործնականում կիրառվող գործիքի անհամապատասխանություն

Ստեղծվում է մի իրավիճակ, երբ օրենսդրորեն հայտարարված սկզբունքները, որ ուսումնական ձեռքբերումների գնահատման ժամանակ *գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը, գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել*՝ գործնականում չեն կարող լիարժեք իրականացվել հատկապես հաղորդակցման, ինտելեկտուալ (մտավոր) և զուգակցված այլ խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների դեպքում:

Եզրակացություն՝ *Ներդպրոցական վերահսկողության արդյունքում արձանագրվել է, որ հաղորդակցման, ինտելեկտուալ (մտավոր) և զուգակցված այլ խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների և մանկավարժահոգեբանական ծառայությունների 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող սովորողների դեպքում ուսուցիչները գործնականում ունենում են դժվարություններ դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում առկա բնութագրիչների միջոցով սովորողների ուսումնառության ընթացքում արձանագրված իրական առաջընթացը լիարժեք արտացոլելու հարցում:*

Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ նշված դժվարությունները պայմանավորված են սովորողների զարգացման առանձնահատկություններով և բնութագրիչների ընտրության սահմանափակ հնարավորություններով, ուստի դրանք չեն կարող դիտարկվել որպես ուսուցիչների կողմից գնահատման գործընթացի ոչ պատշաճ իրականացում:

Բնութագրիչների վերլուծություն

Դասարան	Առարկա	Ոլորտներ, որից հնարավոր է ընտրել բնութագրիչ	Մեկնաբանություն	Ոլորտներ, որից հնարավոր չէ ընտրել բնութագրիչ	Մեկնաբանություն
1-ին	Մայրենի	1.Ինքնություն 2.Հաղորդակցում		3. Ընթերցանություն	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն
		4.Ստեղծագործություն	Այս ոլորտում նշում ենք միայն «Մասնակցում է ֆիլմերի, տեսանյութերի, նկարաշարերի դիտմանը»՝ Ե բաժնից		
	Մաթեմատիկա	1.Նախնական մաթեմատիկական պատկերացումներ, առարկաներ,առարկաների հավաքումներ		2.Առաջին տասնյակ 3.Երկրորդ տասնյակ	
	Ես և ինձ շրջապատող աշխարհը	---------	----------	----------	----------
	Տեխնոլոգիա	Կապակցում			
	Ֆիզկուլտուրա	1.Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ 2.Աթլետիկ վարժություններ 3.Մարմնամարզական վարժություններ 4.Շարժախաղեր		5.Ընտրովի ուսումնական նյութեր	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն
	Կերպարվեստ	----------	----------	----------	----------
2-րդ	Մայրենի	1.Ինքնություն 2.Հաղորդակցում		3. Ընթերցանություն	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն
		4.Ստեղծարարություն	Այս ոլորտում նշում ենք միայն «Խմբի կազմում իրականացնում է որոշ մեխանիկական աշխատանքներ»՝ Ե բաժնից		
	Մաթեմատիկա	4.Երկրաչափություն	Այս ոլորտում նշում ենք միայն «Ըստ տրված օրինակի և	1.Երկնիշ թվեր	Այս ոլորտների բնութագրիչները

			օգնությամբ բաժանում է տրված պատկերներից՝ շրջանը, քառակուսին և ուղղանկյունը, մեկ կամ երկուսը 2 կամ 4 հավասար մասերի»՝ Ե բաժնից, սակայն այն ամբողջական հաղթահարելի չէ և նշվում է միայն ամփոփիչ գնահատում իրականացնելու նպատակով	2. Բազմապատկում և բաժանում 3. Մեծություններ և չափում 5. Տվյալներ 6. Եռանիշ թվեր	հաղթահարելի չեն
	Ես և շրջակա	1. Ես 3. Ես և մարդիկ		2. Ես	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն
		4. Ես և բնությունը	Այս ոլորտում նշում ենք միայն «Նկարների վրա ցույց է տալիս որոշ կենդանիների և համապատասխանեցնում՝ ըստ խմբի՝ ընտանի և վայրի»՝ Ե բաժնից		
		5. Ես և տիեզերքը	Այս ոլորտում նշում ենք միայն «Տարբերակում է որոշ ձայներ, նկարների վրա նշում է, թե ինչի ձայն է»՝ Ե բաժնից		
	Տեխնոլոգիա	1. Գրաֆիկա	Այս ոլորտում նշում ենք միայն «Ճանաչում է մի քանի երկրաչափական պատկեր»՝ Ե բաժնից	3. Գործընթացներ և արտադրություն 4. Ձեռնարկատիրություն 5. Տեղնոլոգիա և կյանք	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
		2. Նյութեր և կառուցվածքներ			
	Ֆիզկուլտուրա	2. Աթլետիկական վարժություններ 3. Մարմնամարզական վարժություններ 4. Շարժախաղեր		1. Ֆիզիկական դաստիարակության և սպորտի տեսություն	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն

	Կերպարվեստ	1.Ստեղծում 2.Ներկայացում 3.Արձագանքում		4.Կապակցում	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն
3-րդ	Մայրենի	1.Ինքնություն		2.Հաղորդակցում 3. Ընթերցանություն 4. Ստեղծարարություն	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Մաթեմատիկա			1.Բազմանիշ թվեր, թվագրության դիրքային և ոչ դիրքային համակարգեր 2.Թվաբանական գործողություններ բազմանիշ թվերի հետ 3.Տվյալներ, դրանց հավաքումը և մշակումը	Սրանք ամբողջական ոլորտներն են, որոնց բնութագրիչները հաղթահարելի չեն
	Ես և շրջակա	3.Ես և բնությունը 4.Ես և տիեզերքը		1.Ես 2.Ես	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Տեխնոլոգիա	4.Տեխնոլոգիա և կյանք		1.Նյութեր և Կառուցվածքներ 2. Գործընթացներ և արտադրություն 3. Ձեռնարկատիրություն	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Ֆիզկուլտուրա	3.Մարմնամարզական վարժություններ		1.Ֆիզիկական դաստիարակության և սպորտի տեսություն 2.Աթլետիկական վարժություններ 4.Շարժախաղեր	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Կերպարվեստ	1.Ստեղծում 2.Ներկայացում 3.Արձագանքում		4.Կապակցում	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն

4-րդ	Մայրենի	1.Ինքնություն 2.Հաղորդակցում		3. Ընթերցանություն 4. Ստեղծագործություն	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Մաթեմատիկա	3.Երկրաչափություն	Այս ոլորտում նշում ենք միայն «Օգնությամբ և ըստ տրված օրինակի՝ գծում է ուղիղ,հատված, ճառագայթ և անկյուն»՝ Ե բաժնից, սակայն այն ամբողջական հաղթահարելի չէ և նշվում է միայն ամփոփիչ գնահատում իրականացնելու նպատակով	1.Գործողություն բազմանիշ թվերի հետ 2.Սովորական կոտորակներ 4.Մեծություններ	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Ես և շրջակա	1.Ես և մարդիկ համայնք 4.Ես և բնությունը, Կենդանի բնության օբյեկտներ 5.Ես և տիեզերքը Շարժում և փոխազդեցություն Մարմիններ		2.Ես և մարդկ Տնտեսություն 3.Ես և մարդիկ Իրավունք Կոնֆլիկտ	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Տեխնոլոգիա	1. Գրաֆիկա 2.Նյութեր և կառուցվածքներ		3. Գործընթացներ և արտադրություն 4. Ձեռնարկատիրություն 5.Տեխնոլոգիա և կյանք	Այս ոլորտների բնութագրիչները հաղթահարելի չեն
	Ֆիզկուլտուրա	1.Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ 2.Աթլետիկական վարժություններ 3.Մարմնամարզական վարժություններ 4.Շարժախաղեր 5.Ընտրովի ուսումնական նյութ			

	Կերպարվեստ	1. Ստեղծում 2. Ներկայացում 3. Արձագանքում		4. Կապակցում	Այս ոլորտի բնութագրիչները հաղթահարելի չեն